««Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ օրենք) 4-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 15-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրում (տաքսամոտորային փոխադրում)՝** մինչև 5 նստատեղով (ներառյալ վարորդի նստատեղը) թեթև մարդատար ավտոմոբիլներով ուղևորների և ուղեբեռների պատվերով (անկախ պատվերի ձևից) վճարովի փոխադրման գործունեություն:»:

2. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«**Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձ՝** «Ֆ» տիպի լիցենզիա ունեցող ֆիզիկական անձ, որն իրեն սեփականության կամ տիրապետման իրավունքով պատկանող սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված արտաքին կահավորմամբ մինչև 5 նստատեղով (ներառյալ վարորդի նստատեղը) թեթև մարդատար ավտոմոբիլով իրականացնում է մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ, առանց այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից էլեկտրոնային հարթակներով կամ այլ միջոցներով ուղևորների փոխադրման պատվերներ ստանալու:

Օդանավակայանի տաքսի ծառայություն՝ «Ա» տիպի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ուղևորների փոխադրման գործունեություն:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի «պատվերներով ավտոբուսներով» բառերից հետո լրացնել «և վեցից ութ նստատեղ (բացառությամբ վարորդի նստատեղի) ունեցող թեթև մարդատար ավտոմոբիլներով» բառերը:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնողների ավտոտրանսպորտային միջոցները պետք է կահավորված լինեն՝

1) տվյալ ավտոտրանսպորտային միջոցի համար ստուգաչափված ավտոմոբիլային սակաչափիչով կամ արբանյակային տեղորոշման համակարգով (GPS, ГЛОНАСС և այլն) վազքի միավորի հիման վրա փոխադրավարձը հաշվարկող ծրագրային հավելվածներով ներբեռնված էլեկտրոնային սարքով.

2) տաքսի ծառայություն մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանման, ինչպես նաև տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի անվան մասին տեղեկատվությամբ.

3) գնացուցակով, որը պետք է լինի ուղևորի համար տեսանելի մասում և առնվազն պետք է ներառի ուղևորափոխադրման նվազագույն արժեքը (առկայության դեպքում), ուղևորափոխադրման սակագինը, նստելավարձի և (կամ) սպասելավարձի մասին (առկայության դեպքում) տեղեկատվությունը.

4) ավտոմոբիլի տանիքին և կողային մասում տաքսու շախմատաձև տարբերանշանով, կողային մասում ուղևորափոխադրման նվազագույն

արժեքի (առկայության դեպքում), սակագնի, նստելավարձի, սպասելավարձի մասին (առկայության դեպքում) տեղեկատվությամբ (բացառությամբ՝ այն տրանսպորտային միջոցների, որոնք փոխադրումներ են իրականացնում միայն էլեկտրոնային հարթակով պատվերով):»:

3. 4-րդ մասից հետո լրացնել նոր 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«5. Օդանավակայանների, ավտոկայարանների, ավտոկայանների և միջմարզային երթուղիները սպասարկող երթակարգավարական կետերի տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով տաքսի ծառայությունների մատուցումն իրականացվում է միայն տաքսի ավտոմոբիլների կանգառներում, բացառությամբ ուղևորների կողմից իրականացված պատվերների:

6. Օդանավակայանների տարածքի տաքսու կայանատեղերից ծառայություն կարող են մատուցել միայն օդանավակայանի տաքսի ծառայություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը:
7. Օդանավակայանի տաքսի ծառայության լիցենզիա տրվում է միայն այն կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին, որոնք ունեն մինչև յոթ տարեկան, սպիտակ հիմնագույնի, գործարանային վառելիքային համակարգով շահագործվող, «Աէրոտաքսի» գրառումամբ և տաքսու շախմատաձև տարբերանշանով արտաքին ու սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին համապատասխան ներքին կահավորում ունեցող ավտոմոբիլներ:
8. Մարդատար-տաքսի ավտոմոբիլների համար նախատեսված կանգառներ չեն կարող տեղակայվել միջմարզային կանոնավոր երթուղիների սկզբնակետերը և վերջնակետերը սպասարկող ավտոկայարանների, ավտոկայանների և երթակարգավարական կետերի տարածքներում:
9. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների միայն պատվերներ (էլեկտրոնային հարթակներով կամ այլ միջոցներով) ձևակերպող և փոխանցող (այսուհետ՝ միայն պատվերներ ձևակերպող և փոխանցող) կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնից ստանալ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք:
10. Միայն պատվերներ ձևակերպող և փոխանցող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են պատվերները փոխանցել բացառապես մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին:
11. 11. Լիազոր մարմինը միայն պատվերներ ձևակերպող և փոխանցող կազմակերպություններին առցանց տրամադրում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության տեսակով լիցենզավորման տվյալների բազայից օգտվելու հնարավորություն, իսկ միայն պատվերներ ձևակերպող և փոխանցող կազմակերպությունները վերահսկողություն իրականացնող մարմնին առցանց տրամադրում են իրենց տվյալների բազայից օգտվելու հնարավորություն՝ ապահովելով անձնական տվյալների

պաշտպանության օրենսդրության պահանջները:

12. Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց լիցենզիան տրվում է, եթե անձը հաշվառված չէ թմրաբանական բժշկական հաստատություններում հաշվառված անձանց ցանկում և անցել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված առողջական վիճակի պարտադիր նախնական բժշկական զննություն:
13. Լիազոր մարմինը մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց լիցենզիայի գործողությունը դադարեցնում է, եթե անձը լիցենզիայի գործողության ընթացքում հաշվառվել է թմրաբանական բժշկական հաստատություններում հաշվառված անձանց ցանկում կամ զրկվել է վարորդական իրավունքից: Եթե անձը չի անցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված առողջական վիճակի հերթական տարեկան պարտադիր բժշկական զննությունը, կամ նրա վարորդական իրավունքը ժամանակավոր կասեցվել է, լիազոր մարմինը կասեցնում է լիցենզիայի գործողությունը, մինչև անձի կողմից հերթական տարեկան պարտադիր բժշկական զննություն անցնելը կամ վարորդական իրավունքի վերականգնումը: Լիցենզիայի գործողության դադարեցման կամ կասեցման վերաբերյալ լիազոր մարմինը եռօրյա ժամկետում ծանուցում է համապատասխան անձին:
14. 14. 30 և ավելի ավտոտրանսպորտային միջոցներով տաքսամոտորային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը պետք է փոխադրումներում ներգրավեն հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրման համար նախատեսված նվազագույնը մեկ ավտոտրանսպորտային միջոց:»:

Հոդված 4. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1. 5-րդ մասի 3-րդ պարբերության «տաքսամետրի» բառը փոխարինել «ավտոմոբիլային սակաչափիչի» բառով և պարբերությունը լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարությունը առանձին դեպքերում կարող է սահմանել փոխադրման հաստատագրված վճարներ:» նախադասությամբ:
2. 8-րդ մասից հետո լրացնել նոր 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«9. Արգելվում է ավտոկայարանների, ավտոկայանների և կանոնավոր երթուղիները սպասարկող երթակարգավարական կետերի տարածքներից, ինչպես նաև տրանսպորտային միջոցների ինքնակազմակերպվող կուտակման կետերից միջմարզային և ներմարզային կանոնավոր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների ուղեգծերով, կամ երթուղու ցուցանակներով մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորների փոխադրումները:

10. Մարդատար-տաքսի ավտոմոբիլների համար նախատեսված կանգառներից չեն կարող օգտվել սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետում նախատեսված արտաքին կահավորանք չունեցող

տաքսի ծառայություն մատուցող տրանսպորտային միջոցները:

11. Արգելվում է օդանավակայանների տարածքում «Ա» տիպի լիցենզիա չունեցող մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումներ իրականացնողների կողմից ծառայության մատուցման գովազդը÷
12. Արգելվում է ավտոկայարանների, ավտոկայանների և միջմարզային երթուղիները սպասարկող երթակարգավարական կետերի տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլների փոխադրումներ իրականացնողների կողմից ուղևորների հավաքագրումը:»:

Հոդված 5. 24-րդ հոդվածի 2-րդ մասում «չմիացված լուսացուցիչով» բառերը փոխարինել «լուսացուցիչի կանաչ լույսով, կամ չմիացված ավտոմոբիլային սակաչափիչով, կամ ավտոմոբիլային սակաչափիչի ցուցմունքից ավել փոխադրավարձով, կամ առանց սակաչափիչի ցուցմունքի փոխադրավարձ սահմանելով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա մեկից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-120-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի <<Գործունեության այլ բնագավառներ>> բաժինը լրացնել նոր 10-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

<<

10. Մարդա
պատվ
ձևակե

>>

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա մեկից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիզենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի՝

1.1-ին մասը լրացնել նոր 13-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«13) մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված առողջական վիճակի հերթական տարեկան պարտադիր բժշկական զննությունը չանցնելու կամ նրա վարորդական իրավունքը ժամանակավոր կասեցվելու դեպքում:»:

2.10-րդ մասից հետո լրացնել նոր 11-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«11. Լիազոր մարմինը սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված լիցենզիայի կասեցման վերաբերյալ եռօրյա ժամկետում ծանուցում է լիցենզավորված անձին:»:

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը լրացնել նոր 8.1-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

<<8.1) մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման համար լիցենզիայի պետական տուրքի հերթական վճարմանը հաջորդող երկու ամիս անընդմեջ տուրքը չվճարելու, մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձի թմրաբանական բժշկական հաստատություններում հաշվառված անձանց ցանկում հաշվառվելու կամ վարորդական իրավունքից զրկվելու դեպքում:>>:

2. 7-րդ մասի <<և 7-րդ>> բառերը փոխարինել <<, 7-րդ և 8.1-րդ>> բառերով:
3. 13-րդ մասից հետո լրացնել նոր 14-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

<>:

43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակում 16-րդ բաժինը լրացնել նոր 6-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

6. Անհատ
կազմա
օդանա
տաքսի
կազմա

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա մեկից:

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի «15. Տրանսպորտի բնագավառ» բաժնի 15.5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«15.5

Հոդված 2. Օրենքի 19.7-րդ հոդվածի

1. 3-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում է համարվում բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում մինչև հինգ նստատեղ ունեցող թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլով իրականացվող ուղևորափոխադրումը, այդ թվում՝ ըստ նախնական պատվերի, ինչպես նաև վեցից ութ նստատեղ ունեցող (բացառությամբ վարորդի նստատեղի) թեթև մարդատար մեքենայով համապատասխան պայմանագրերի համաձայն իրականացվող ոչ կանոնավոր կամ զբոսաշրջային ուղևորափոխադրումները, այդ թվում՝ ըստ նախնական պատվերի։»:

Հոդված 3. Օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակը լրացնել նոր 16-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

<<16) Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների միայն պատվերների (էլեկտրոնային հարթակներով կամ այլ միջոցներով) ձևակերպում և փոխանցում իրականացնելու իրավունք ձեռք բերելու համար

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերությունները:

Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել 34-րդ հոդվածի վերջին պարբերությունը:

Հոդված 6. Օրենքը լրացնել նոր 45-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 45.** Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետական տուրքերի գանձումը

Սույն օրենքի 19-րդ հոդվածի 15-րդ բաժնի 15.5 կետով սահմանված գործունեության տեսակի համար տարեկան պետական տուրքի գումարի վճարումը պետական տուրք վճարողի կողմից իրականացվում է վճարման ենթակա հերթական ժամանակահատվածի համար սահմանված դրույքաչափով:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա մեկից:

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 137.^{2}–րդ հոդվածի.

1. 1. 8-րդ և 9-րդ մասերը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

«8.Առանց ավտոմոբիլային սակաչափիչի, կամ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար ստուգաչափված ավտոմոբիլային սակաչափիչի, կամ անսարք ավտոմոբիլային սակաչափիչով, կամ առանց արբանյակային տեղորոշման համակարգով (GPS, ГЛОНАСС և այլն) վազքի միավորի հիման վրա փոխադրավարձը հաշվարկող ծրագրային հավելվածներով ներբեռնված էլեկտրոնային սարքերի կիրառման մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

9.Առանց լիազոր մարմնից ծանուցման ենթակա մարդատար-տաքսի

ավտոմոբիլով ուղևորափոխադրումների միայն պատվերներ (էլեկտրոնային հարթակներով կամ այլ միջոցներով) ձևակերպելու և փոխանցելու գործունեությամբ զբաղվելու իրավունքի գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

10. Առանց տաքսի ծառայություն մատուցող կազմակերպության, կամ անհատ ձեռնարկատիրոջ և տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի մասին տեղեկատվության կամ գնացուցակի մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

11. «ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատաձև տարբերանշանով կահավորված ավտոտրանսպորտային միջոցները առանց թափքի կողային մասում առկա ուղևորափոխադրման նվազագույն արժեքի (առկայության դեպքում), ուղևորափոխադրման սակագնի, նստելավարձի և (կամ) սպասելավարձի մասին (առկայության դեպքում) տեղեկատվության մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

12. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների միայն պատվերներ (էլեկտրոնային հարթակներով կամ այլ միջոցներով) ձևակերպող և փոխանցող (այսուհետ՝ միայն պատվերներ ձևակերպող և փոխանցող) կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով գործունեություն իրականացնելու լիցենզիա չունեցող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին, կամ մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց պատվերներ փոխանցելը, ինչպես նաև պատվերների ձևակերպման համապատասխան ծրագրերով աշխատելու դեպքում վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին տվյալների բազայից առցանց օգտվելու հնարավորություն չտրամադրելը կամ բազայի թերի տրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

13. Զբաղեցված մարդատար-տաքսի ավտոմոբիլով առանց տաքսու մեջ գտնվող ուղևորի (ուղևորների) համաձայնության այլ անձանց փոխադրումների իրականացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

14. Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց կողմից այլ կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից էլեկտրոնային հարթակներով կամ այլ միջոցներով ուղևորների փոխադրման պատվերներ ստանալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

15. Ավտոկայարանների, ավտոկայանների և կանոնավոր երթուղիները սպասարկող երթակարգավարական կետերի տարածքներից, ինչպես նաև ինքնակազմակերպվող տրանսպորտային միջոցների կուտակման կետերից միջմարզային և ներմարզային կանոնավոր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների ուղեգծերով, կամ երթուղու ցուցանակով մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորների փոխադրումներ իրականացնելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

16. Առանց օդանավակայանների հետ կնքված պայմանագրի օդանավակայանների տարածքի տաքսի ավտոմոբիլների կանգառներից տաքսի ծառայություններ մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

17. 30 և ավելի ավտոտրանսպորտային միջոցներով տաքսամոտորային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից փոխադրումներում հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրման համար նախատեսված նվազագույնը մեկ ավտոտրանսպորտային միջոց չներգրավելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

18. Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտմամբ երեխաների փոխադրումների իրականացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

19. Սույն հոդվածով սահմանված խախտումների համար վարչական պատասխանատվությունը կիրառվում է խախտումը կատարած կազմակերպության պաշտոնատար անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի նկատմամբ:»:

Հոդված 2. 172.2–րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ.

«Օդանավակայանների, ավտոկայարանների, ավտոկայանների և միջմարզային երթուղիները սպասարկող երթակարգավարական կետերի տարածքներում մարդատար-տաքսի ավտոմոբիլների փոխադրումներ իրականացնողների կողմից ուղևորների բանավոր հավաքագրումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով։»։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա մեկից։